

դիւր թանաքակուած պահել և ստիպել որ իրար լրտեսեն ու ամէն օր իրարու մասին մէյմէկ ժուռնալ գրեն, այս ալ տեսակ մը տանջանք է որ կը նմանի՝ օճը իր թոյնովը սպաննելու:

Ե. ՕՏԵԱՆ

ՍՕՅԵԱԼ ՏԵՄՕԿՐԱՏ

(Երիւտ)

Սոյ ապրանքէն Պոլիս չունէր, կովկաս ալ դ պակասը լրացուց պէտք եղածէն աւելի արտածելով մեզ:

Մեր ունեցածը Թարմասօն անկատարն էր, Սոցեալ Տէմօկրատը իբր թէ կատարեալ եկաւ անոր տեղը բռնեց:

Սոցեալ Տէմօկրատը հասարակ մանկանացու մը չէ, ոյլ մարդ մը այն վարկեաններուն որ ինծի պէս քեզի պէս կը խօսի, իսկ երբ լուսթեամբ կը քալէ, իր խօսքը և ճճութեամբ գլխարկովը, մկրատ և սանար չտեսած խառնափնթոր երկայն մաղերովը, և նայածքովը, Խաչական կոյս լեռներու ճամբորդ խուզարկողները կը յեռնեն:

Սոցեալ Տէմօկրատը կ'արհամարհէ դրամը, դրամն ալ այս բանը գիտնալով չնորհալի փափկանկատութեամբ մը կը զգուշանայ ասոր հանդիպելէ, ահա թէ ինչու մինչեւ այսօր Սոցեալ Տէմօկրատն ու դրամը միասին տեղ մը նստելով պիրա խմած չեն:

Սոցեալ Տէմօկրատը կ'արհամարհէ նաեւ այն ամէն բաները որոնք նոր են: Չհաւատացողին իր վրան գլուխը վկայ, որ միշտ հին ու մին և ամէն կողմը ծակ է, սկսելով գրպանէն մինչեւ կոշիկները, Y.compris տաքաթնու բաճկոնը:

Սոցեալ Տէմօկրատը միշտ խոհապնորով կ'ապրուի, և յաճախ անոր մէկ զոհը կ'ըլլայ, այս զոհաբերութեան համար Պոլսահայը բացատրութիւն մը ունի, որ իր խօշին գացած է եղ նահապաղ ըլլալ:

Սոցեալ Տէմօկրատին իտէալնեւրուն մէջ առաջին տեղը կը գրաւէ մարդկային ընկերական գասակարգերու ջնջումը:

Կ'ուզէ որ աշխարհիս բոլոր մարդիկը քառախանա ջօրպասիի պէս իրար խառնէ, և այդ խառնուրդէն դգալ դգալ սոնելով շինէ այնպիսի մարդ մը, որ մարդկային բոլոր բարեմասնութիւնները ունենայ բացի դրամէ:

Սոցեալ Տէմօկրատը առաջին պաշպանն է աշխատաւոր և արտադրող դասակարգին բռնաբարուած իրաւունքներուն:

Գործաւորական միթիւններ

կազմակերպել, ժամերով օրերով ճառախօսել, հանդիմանել համար ալդ տգէտ մարդոց որ իրենք ալ ունին սեփականատէրի այն բոլոր իրաւունքները որոնցմով օժտուած կը կարծուի միայն հաւուստը:

Խեղճ գործաւորը կը հասկնայ այդ բոլորը, բայց ինչ ընէ. միջոցը կը պակսի և երբ այդ միջոցը կը խնդրէ Սոցեալ Տէմօկրատէն, այս վերջինը պատասխան մը միայն կուտայ:

Իս խառնուր իշի գործերին չեմ խառնուում այդ էլ դուք զըտէք:

Սոցեալ Տէմօկրատը մասնաւոր զբաղում մը չունի իր անձնականին վերաբերող, քանի որ զըրամի համար չ'աշխատիր, և ինքզինքը նուիրած է իր նմաններուն:

Ուստի բնաւ պէտք չէ այդանել Սոցեալ Տէմօկրատը, երբ ինքն ալ ուրիշներէն կը պահանջէ երբեմն երբեմն քանի մը մէծիտ նուիրել իրեն, չվճարելու պայմանաւ փոխ անունին տակ:

Սոցեալ Տէմօկրատը դրամին թշնամին է, դասակարգային կազմութեան թշնամին է, Սոցեալ Տէմօկրատին ալ թշնամին Ռուս կառավարութիւնն է, որուն ձեռքէն եթէ գայ ամենուն ալ վրան կազ թափելով կը բռնկցնէ, կ'ոչընչացնէ:

Ահա թէ ինչու Ռուսաստանէն հոս գաղթողներուն մեծ մասը եերիլն եզաւ աստեղին:

Անցածները պատիւը եւ քաջութիւնը ունեցայ քանի մը վայրկեան խօսելու Սոցեալ Տէմօկրատի մը հետ:

Ինչո՞ւ մաղերնիդ կտրել և յարդարել չէք տար կոր:

— Ելի, փող չունենք որ սափրիչին ափը լցնեք:

— Բայց կրնաք սանտրել:

— Խօ աղբեր փող չունենք որ սանտր վաճառողից մի հատ գընենք:

— Եղբայր ինչո՞ւ պարապ փողոցները կը պտտիք կոր, դացէք աշխատեցէք բաւական ուսում առած էք վաճառատունները մըտէք պաշտօնեայ եղէք:

— Էդ քանը մեր ծրագրի հակառակ է մենք կուտում էք սեփականատէրի դէմ, գնանք մեր թշնամու ոտները փարենք:

— Բայց դուք առանց մէկ կուտի ինչպէս կ'ապրիք կոր:

— Բարեկամներ Աստուած չպակասցնէ ողջ լինին նրանք:

— Բայց բարեկամը մէկ կուտայ երկու կուտայ:

— Հոգս մի անէք ամէն սահաք նա կտայ:

— Պոլսէն երթալու միտք ունի՞ք:

— Ի՞նչ ես ասում եղբայր, ո՞ւր

գնանք, Անցեալներում՝ երբ սօտատներին շէրիաք պահանջելովը բռնապետութիւնն էր գալիս, շաշիւմիլ էինք առել թէ ուր գընանք, խօ Ռուսաստան վերադառնալ չի կարելի, Նիգօլան մատաղ կ'անէ մեզ իր բանայեային թէկուզ մեղ տելով դուրս վանէք թուրքիայից, մենք նորից չենք գնար:

— Ի՞նչ է ձեր նպատակը հոս մնալով:

Մեր ծրագիրը չատ ընդարձակ է, նրա մի քանի կէտէրը ցոյց տամ ձեզ:

1. Խփել բոլոր դպրանոցներին, և նրանց տեղ հաստատել կիմնազիանք, քիալ շուշներ, ուր սովորեցնեն մանուկին սոցեալ դէմօկրատական հարցերին հիմունքը և սկզբունքները: Սրանից դուրս եկող մանուկը ահա կը լինի մեր գաղափարներով անած հաւատարատէր, ազատամիտ մանուկը:

2. Խփել բոլոր ձեր թերթերին, և նրանց տեղ հրատարակել, գործաւորական, մանկավարժական, ընկերավարական, լուրջ հարցերով զբաղող թերթեր և գրքոյքներ: մի ֆորմանոց, և գրքերին ճակատը զարդարած նշանաւոր դէմօկրատներին լուսանկարներով:

3. Ամէն տեղ կազմել միթիւնկներ, գործաւորական, արհեստական ընկերութիւններ, գործադուշներ և պայքար դրամատէր դասակարգին դէմ:

— Բայց այս ամէնը ընելու համար դրամ չունիք:

— Ձեր ունեցածը մեզ ալ, ձեզ ալ բաւական է:

Ապշած հեռացայ քովէն, մըտածելով որ հիւր ըսածդ ալ ասանկ ըլլալու է, կը մեղքնաս ներս կ'առնես, ահա օր մըն ալ կը նայիս որ տանտէրը ան եղեր է իսկ չկըրը դուն:

ԳԲ. ՀԱՄԲԻԿԵԱՆ

ԲԱՅ ՆԱՄԱՆ ՇԵՂԷՐԹ ՓԱՇԱՅԻՆ

Գում Դաբոսեմ հետեւեալ նամակը ստացանք, ուղեալ շալժուն բանակի հրամանատար Շեղքեթ փաշային, զոր նոյնուպեամբ կը հրատարակենք ստորեւ:

Կըյրիճներու կըյրիճը, ասլանի պէս ճէտուր, Սեւանիկի վիրա էրէրացող օրտուներուն պաշ ասքէրը, իմ անլման ճիւղան Շեղքեթ փաշաներու փաշաս, իմացայ քիմ բիւթիւն խալքին տէրտին տէրմանը հիմաճուկ տուն էս էղեր, չատ բէճա կընեմ, լուս լուսաւորչի դաւակ հայ մար մըն էմ, էս ալ տէրտ մը ունիմ, մէրհամէթ ըրէ տէ ճար մը կըտիր, ժամ չինամի խըտար կըլլաս:

Պարէմ այն խալըրը ըրէ ինծի

տէ, լուսաւորչին չինդացի նէ, քու սէպկպովդ օր տնտաւ կիչ մը:

Մէկ հատիկ մանչ մը անամ, պէլքի կը ճանչնաս, խոյուօճիները որի օր հարցնես ինտիսարուցի միանձի Արտակը տէյի չէ: Գըփըն իշին կը ցուցնեն, ան խոտալ մէթին էվ հիւնկըլի է ճօճօխրս:

Կիտես աս տղան ինտոր տնեցած էմ նէ: Հարսիլքիս կիշէրէն պոնէ թամ օխար տարի դաւակ չունեցայ: Ձէն Հօգեւորին վրայ թարիլը լուսաւորչին ծառքովը կրած է. ուղես նէ խաւքիմ տես: Արթըրս Արմաշներ ուխտի մը կընես, Թէքիրասալի Սըլե Թագաւորին, մատաղներ մի կընես, փաթթօցըններու կարգացնել մի սինչուկ Սյթը Մէրմըրի հաւմըններուն այաղման էրթալու էղայ, չինքի աս միլլէթին խարէզլի էմ հոռոմ պէսլմէ մը ունի, ճէնէզէս մնացած էրկու զիւրիլթ օղերըս կողնալով փախած է փոստալը:

Իննինձի տարին էր, աս օրուան պէս միտքըս է, Պալաթին ինտիսարու կրուեր էինք, Մայիսի սօներուն էր, էրկուշաբթի առաւուր մը գլխաւորս տէլիսանլը տըթթու մը պերս:

Կէնչ արեւուն մեւնիմ, անանկ իւսճ մը ըրաւ քի տարին չթամացած Արտակովս ծօցուր ինկայ: Իշթէ աս խըյմաթըլը գաւակս քի էլտէ ընելու համար անխըտա, իսկէնձէ քաշեր եմ. մէկ հատիկ օրթիս ծառքէ կէլլէ կոր մէրհամէթի փաշաս, ինչու կիտէս, աֆ կընես ճէսայէթուլթեանս սէպկպր տուն էս:

Հանի ան օրը քիմ սթամպօլը խարը մը պօյով կըյրիճներու հետ կոխեցիք տէ, փիւթիւն խըլաները զապթը ըրիք է, էնթարի էօրթիւ ինչ խապար չեմ եսասի մը տըրիր, եանի կիշերները սահաթը 1 էն սօնրա սոխախները խաթիէն մարդ պիտոր չըլլայ տէյի:

Ստ օրէն ի վեր մահալիս վրայ օր օրի մէրադ մը էկաւ, տուտուէս կիշերները տուրս պիտի էլլամ տուտու էս էլլէնձէ կ'ուզեմ տէյի:

Բա փաշա էֆէնտիս հարս մը պերենք տուն ըսի, չուղեց: Ծառքըս պերնիս կը հասնի խալըս վախթըս տեղն ի քէն պոնեցի վերի երկու օտային մար մը իլէն աղջիկ մը քիւրաճի տրի թէք ինչ է, տունին մէջը երկու ծան էվէլ ըլլայ տէ ճօճօխրս էլլէմիլը ըլլայ տէյի կէնէ ֆախտա չըրաւ:

Անանկ պան մը եկաւ քիմ, կիտես, թարիլ չեմ կրնար ընել փաշաս, չաքաթ մը կայ քի, տուն կուգայ կոր էրկու լօխմա պան տըրաւ մի պերանը, հայաէ տուրս կելլէ կոր և մէյ մըն ալ առտուն տուն օղրամիլ կ'ըլլայ կոր սանկ մէյ մը, խօլալը եախան

փոխելու ետևում մենք մը առնելու համար:

Մար էմ, կը հասկնամ հայկական չեմ սա տղան ասիականները չպառնակիր կոր ես, հէլայէթտէ կըլսը տնելու պարձ մը կտած է:

Առաջներն ալ կիշերները տուրս կ'ելլէր ամա սահաթը օխտը ութը ըսաւ մի կուգար ետեւիսը կը պառկէր:

Երեկ առտու խոստովանցուցի, ըսաւ քիմ, ետեւիսին համար մէ՛ն պուշ կ'ըլլայ կոր էղեր արխը-տաշներուն տունը պառկելու: Փիւթիւնը սուտ է, մէյէր հայկական ըլլամ քի ֆարիսին չերթամ, աշկըներուն կրակը մարէր թախ ներս քաշուեր է պէպէքը, սուրաթը ըսեո րէնկ չէ մնացեր, թիֆօէ էլածի հիւթը ունի:

Ինծի ընին քիմ տղադ Հիւսար Տիպի մալիւի տունին սարը կնկանը պոնուած է տէյի նէ չըհաւտացի:

Աման փաշա եանր չկայ տղաս չարաթ մըն ալ տուրսը պառկի նէ սիւղիւմիշ կ'ըլլայ վէրէմէն կը մեռնի, վազ եկուր սա ետեւիսին տէ տղաս կիշերները պտըտի պտըտի կէնէ տուն դայ:

Էյոր թէքիֆիս իսպուլ ընես նէ փաշա, րախըլիդ մէզէցու եաւանճի տօլմա մը ծառքովս կը դնեմ տէ կը պերեմ, ինքզինքս մէթ ընել չըլլայ փիւթիւն խուժ-խափուն ալիթիւթ օ հա նէ ինծի պէս տնող եփօզ չես կրնար գըտնալ:

Օտքըք ծառքը պաղնելով
մնամ քէօյէդ
ՆէՄՁՈՒՐ ՏՈՒՏՈՒ
(Գրի առաւ Համբո)

Կ'ԵԼԼԵ ԿՈՐ

Կարգ մը մարդոց կերածները, Շէվքէթ փաշային մասածովը կունակէն կ'ելլէ կոր:

Շերիաք տիպանիսի Համիտին աշքին լուսերը օդ առնելու համար օդին մէջ կ'ելլեն կոր:

Խեղճ Համիտ աղան՝ քանի կը լսէ թէ, փարայով չի հապտ սը-րայով՝ ինքզինքէն կ'ելլէ կոր:

Ատիլ պէյը ամէն անգամ որ Զահրային և Վարդգէսին երեսը նայի, պատերազմ. տեսանը միտքը խնալով հալաները կ'ելլէ կոր:

Զրգ. զօրաբանակէն մաս մը քան մըն ալ ինք ուտել ուղեւով, Համիտին փարաներուն հօտը առնելով իրը թէ ոտքի կ'ելլէ կոր:

Կաղաչեմ մի խնդաք քիւրտու-րուն ալ ըրվէն, պօմպա տինա-միթ կ'ելլէ կոր:

Բանկալթիցի այն սալօնի յեղա-փոխականը, որ վախէն մօրը փէ-չէրուն ու ո՛ր ապառաճած էր շա-

բաթէ մը ի վեր ամէն, առտու գուրս կ'ելլէ կոր:

Խոսմի. Զապէլը մեղմէ վրէժ չկրնալ լուծելուն համար խըքս կ'ելլէ կոր:

Վերջապէս ուզածնիդ պիտի ըլ-լայ, մագնիսը այս կիրակի բեմ կ'ելլէ կոր:

Մեր սիրելի Սուլթանը իր ա-նուշիկ դէմքը ժողովուրդին ցու-ցնելու համար ամէն օր պտոյտի, կ'ելլէ կոր:

Մեր երեսփոխանները քիչ մըն ալ ըսի ըսաւով անցնեն նէ կի-լիկեան բոլորովին ձեռքէ կ'ելլէ կոր:

Պատերազմ. տեսանը՝ որ կա-ռավարական պաշտօնեային յատա-կը խառնէ կոր նէ, տակէն Հա-միտեան ոսկի հակիթը կ'ելլէ կոր:

Շէվքէթ փաշային Պրոպարտի-կէ աւազանը մտնողը հակիթի պէս հստած է նէ տակը կ'երթայ կոր, աղէկ է նէ եղի պէս վրան կ'ելլէ կոր:

Ելալըզին որ դադանի ծակը կը բանան կոր նէ սնտուկներով ա-դամանը և ոսկի կ'ելլէ կոր:

Անուշը չեւք տար, բայց կը հարցնենք թէ ինչու Բերայի դե-ղին մաղերով՝ տմենուն աչքը վրան եղող տիկինը, ամէն օր կէս օրին Շիշլի կ'ելլէ կոր:

ՀԱՄԲՈ

ԿՍՄԻԹՆԵՐ

Կամբէ, բայց ճայէ որ
մասնեդ ոսկուի չգամ:

Վեհափառ կայսրը մօտերս Եւրոպական մայրաքաղաքները պիտի այցելէ եղեր:

Շնորհիւ մեր Սուլթանին թուր-քիա ինքզինքը պիտի յուցնէ օ-տարներուն, մինչ Համիտ ինք-զինքին հետ միասին խեղճ երկիրն ալ կուղէր սըխը սըխը գոց պա-հել, թերեւ նալալի չգալու հա-մար:

Պահուտելուդ թող սխտոր մը կախէր քիթէդ Համիտ:

ՀՀՀ Պաշարման վիճակը պիտի սաստկանայ թէ պիտի վերնայ բոլորովին:

Անա օրուան մօտտուքը երի-տասարդութեան, որուն ոչ մէկ յուսատու խօսք կուղէ կոր Շէվ-քէթ փաշան, չիօսող ալ գործող այդ հրամանատարը:

Բայց եթէ ասանկ տեսու ըլ-լայ այս պաշարման վիճակը քիչ մը դժուար պիտի ըլլայ երկու ընտանիք մէկ տուն նստիլը, ո-րովհետեւ խըփըռ, խըփըռ, եկող երկու երիտասարդութիւնը փիսի փիսի պամպուղիի դասընթացքին մէջ բաւական պիտի յառաջանայ:

ՀՀՀ Շահըջ մինչև Համիտին Սելանիկ քուրիլը չէ ուզեր հա-ւատալ և ինքն ալ սահմանադրու-թիւն տալ: Բայց երբ Համիտի՝ Ալաթինի պարտէզին մէջ քաշել տուած ամենավերջին լուսանկարը տեսեր է, ակամայ ստիպուեր է հաւատալ տխուր իրականութեան և պարսիկներուն չնորհել սահմա-նադրութիւնը այնպիսի դէմքով մը ուր սրտակի կը կարգացուի եղեր, պարսիկները շա՛մ մը ունեցան, իսկ ես, բոլոր շահն կորսնցուցի:

ՀՀՀ Աչքերնիդ լոյս, Հոմիտ աղան չորս պատի մէջ պիտի առ-նեն եղեր: Ուշադրութիւն Սելա-նիկցի աղաքիկներ, Համիտը կա-րող է պատն ի վեր ալ ջուր հա-նելու, մենք ՅՅ տարիէ ի վեր հի աղէկ խալը առինք:

ՀՀՀ Նիազի պէյ հերոսը՝ ան-ցած կիրակի այնքան պաշիկ ստա-ցիւր է Բերայի երրորդութեան ե-կեղեցին, որ մորթի հիւանդու-թեան ենթարկուելով ամէն օր քիւրիւսի պանեօ կառնէ կոր եղեր:

Կըսեն թէ համբոյրի յարձակման նշանը առաջին անգամ Մկրեան քահանան տուեր է ձիւին փաթ-թուելով:

ՀՀՀ Ռուսիոյ դեսպանը այս օրերս Իզմիրեան Հայրիկին պիտի այցելէ եղեր գլուխդ ողջ մնայի: Այս առթիւ Բերայի Թաղ. Խոր-հուրդը գործի վրայ է:

ՀՀՀ Յամբած աղբիւր կիւս-նանք թէ Ապուլ Համիտ Խըտ. րիլիգի առթիւ Սելանիկէն 5,000 ոչխար ազատութեան բանակին խրկելու համար իրատէ՛ր երբ է:

ՀՀՀ Նէճիպ Սէլամէ զինքը դատի քաշելուն համար վարմա-ցեր է. քանի որ, ըսեր է, Ել-տըզին ժողովաները մէջտեղը ըլ-լալով հարկ չկայ կախելու համար, երկար բարակ դատերու:

ՀՀՀ Համիտին հարկմէն փափ-կասուն տիկին մը՝ վափաքեր է պանեօ առնել, բայց խեղճին հա-վիսը փորը մնացեր է ջուրը տաքցնող մէկը չգտնելով:

Ձեռքերդ թընել վախցաք աղ-ջիկս, թող դուն տաքցնէիր, ինչ Ալաթինի դղեակը Ելալըզ քէօ՛չկը կարծեցիր որ փոք դառնելուդ պէս ծառաները գլխուդ վրայ թափին:

ՀՀՀ Պաշտօնական յայտարա-րութիւն մը մինչև հինգ օր դէն-քերը կառավարութեան լանձնել կը հրամայէ քաղաքացիներուն:

Արդեօք որքան Բերայի զինա-կիր Վիսիւներ պիտի թեթեւան օխաներով դրպանին լեցուցած գնդակները յանձնելով փոխին ափը:

ՀՀՀ Ինքնաբերաբար անպայ-մուն կերպով դադարման ենթար-կուեցան մեր բոլոր Ազգ. Ժո-ղովները, Խորհուրդները, Յանձ-նաժողովները և Ընկերութիւնները,

պատճառը հարցնելով հասկցանք որ մեր Ազգ. Երեսփ. Ժողովը իրր գլուխը այդ մարմիններուն գործունէութենէ դադրած ըլլա-լով, իրենք ալ առ ի չգոյէ կա-ռավարողի եղած տեղերնին կեցեր են:

ՀՀՀ Կախաղան հանուելիքնե-րուն համար ՏՕ զոյգ ձերմակ զօ-լալը չապիկ պապարուեր է: Ռո-պէր էՖ. Եաղըճեան յիշելով այն օրերը, երբ Բերայի եկեղեցիին դպիրներուն չապիկ կը նուիրէր, ինքնաբերաբար քսան հատ ծան-րագին չապիկ զրկեր է իր աղաա-րիկներուն համար:

Երբ հարցուցեր են իրեն թէ ինչու հատ մը իրեն համար չի պահեր, գիտէ՞ք ինչ պատասխա-նեւ է,

Երբանիկ մարդը չապիկի պետք չունի:
Վայ տիւտիւի վայ:

ՀՀՀ Օսմ. քօմիթէի կեդրոնը հսկայ աշխատութեան մը ձեռք զարկեր է:

Համիտին սկիզբէն մինչև այսօր գործած բոլոր ոճիրները այրուրէնի կարգաւ և կենսագրական հակիրճ տեղեկութիւններով 14 հատորի մէջ պիտի ամփոփէ եղեր:

Եւ որովհետեւ վաւերական աղ-բիւրներ կը պակսին, իրեն պիտի դիմեն եղեր տեղեկութիւններ քա-ղելու համար:

Ալ հիմա Համիտ կրնաս վատահ ըլլալ որ մինչև Աստուածային շնորհին վրադ իջնալը մազիդ թէյին դաչող պիտի չըլլայ, որով-հետեւ այդ տեղեկութիւնները տալը տարիներ կը տէէ:

ՀՀՀ Սագալը Մէնմէտ փոշան Պրուսայէն հոս բերուեցաւ առ-ջի օրը, Յուլիս 11ը յիշեցնող նը-մանը թիչ տեսնուած ընդունելու-թեան մը աւարկայ ըլլալով ժո-ղովուրդին կողմէ:

Այնքան թուքեր են մարդուն երեսը. որ սափրիչ մը ամիկին առնելով վրան վազեր է ամիւրու մօրուքը օճառուած կարծելով:

ՀՀՀ Դերման Եփրէք թերթերը կը հերքեն կոր Վիլհէլմին Համիտի հետ թղթակցութիւն ունեցած ըլ-լալու լուրը:

Գուրպաղը, ճարտ տա իրսեմ եռտաճամ, ճարդ տա:

Գաւառի եւ արտասահմանի մեր ընթերցողներուն.— Ար-տասահմանի և գաւառի մեր այն ընթերցողները, որոնք դժուարութիւն կը քաշեն մեր թերթը ստանալու գործակալի և ձեռքէ չծախողի պատճա-ռաւ իրենց տեղը, և որոնք կը փափարին այդ պաշտօն-ները ստնձնել թող հաճին մեզ գրել, այս մասին հարկ եղած յանձնարարագիրերը միասին ուղարկելով:

ՊՐՏՁՆԱՏԷՐ Ա. ՍՈՊՈՆԵՐ,
ՏՊԱԿՐԱԿՐԻՒՆ Ի. ԵԱԿԱՆԱՆ

«ԾԱՂԻԿ» ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլսոյ	համար տարեկան	80	դրուշ.
»	» վեցամսեայ	45	»
Գաւառի	» տարեկան	90	»
»	» վեցամսեայ	50	»
Արտասահմանի	»	23	ֆր.
»	»	12	»

Ոչ ոք զօրով բաժանող կ'արձանագրուի:
Դրանք կանխիկ չորհրդներ եւ մեր փառան ու տոգներ կ'անցնենք եւ... կը խայտառակենք:

La Grande Fabrique



1908Ի ԶՄՐԱՆ ԵՒ ԱՇՆԱՆ

ՆՈՐՈՅԹՆԵՐԸ

Փ Ն Տ Ո Ե Ց Է Ք

Շ Թ Ա Յ Ն

ՎԱՃԱՌԱՏԱՆՑ ՄԷՋ

ՊՈԼԻՍ ԵՒ ՂԱԼԱԹԻԱ



ՎԱՅԵԼՉԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ՝ՈՒՋԵՆ ՊԱՀՊՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԷՏՔ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃԵՄԱՐԻՏ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ԿԼԻՍԵՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՀՆԱՐՈՒԱՆՔ 1860

Ա Մ Ե Ն Ա Շ Ի Ն

ԳԵՂԱՅԵՎԱԾՆՈՂ ԵՐԵՄԵ

ԿԸ ԳՏՆՈՒԻ —

ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆԱՅ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ —

— ՊԱՋԱՐՆԵՐՈՒ ՄԷՋ —

ԴՆԵԼՈՒ ԱՏԵՆ Լաւ Ուշադրութիւն Ընել —

— ՎԱՃԱՌԱՆԻՇԻՆ ԵՒ ՄԵՐԺԵՂ —

ԿԵՂՏ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐՆՉՓՈՇԻ

ՕՃԱՌ

ՍԻՄՈՆ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆ

ԱՌԱՆՑ ՊԻՍՏՈՒԹԻ

ԲԱՅԱՐՉԱԿԱՊԵՍ ՄԱՔՈՒՐ

Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՋ

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անկողին եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ սեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս ԻՆԵՐ

Հայրապետի ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ The Singer Manufacturing Co

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամէնէն աւելի կատարելաւ գործուածը, հաստատուէր եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բոլոր վանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինգերի մեքենաները կը գնէ:

Ձեռքի, ոտքի, ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինգերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինգեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

- | | |
|---------|--|
| ԲՆԵՐԱ | 1. Մեծ փողոց, Պոն Մառշի դէմ, Թ. 343 և 343 կրկին. |
| | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի լիւէին գէմ. |
| ԿԱԼԱԹԱ | 1. Սինգեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | 2. Գարաքէոյ, Թրամիէլին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | 1. Սուլթան Համամ, Թ. 2 |
| | 2. Սուլթան Պալատ, Թրամիէլին կայարանին դէմ, Թ. 2 |
| ՍԱՐԻՏԱՐ | 2 արշըր Պոյու, Թ. 120. |

ՇԱԲԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կատարելաւ երաշխաւորուիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինգերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա Մեծ Փողոց Թ.Ն 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէ՛ Տի. գոգյուի տունը:



MA YER-MANN

ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ

ՀԱՆԴԵՐՁԵՆՆԵՐՈՒ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶՄԵՌՆԱՅԻՆ ԶԳԵՍՏՆԵՐ

ԿԻՆԵՐՈՒ, ԱՅՐԵՐՈՒ ԵՒ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ԱԺԱՆ ԵՒ ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

ԴԻՄԵՅԼԻ ԵՒ ԳՈՂ ՊԵՏԻ ՄԱՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՍԵՆԱԿԱՐԵՐՈՐ

Շ Ի Շ Ե Ր

(Verres pharmaceutique)

Դեղարաններու եւ դեղորէից վաճառականներուն համար մասնաւոր շինուած շէնքերը մինչեւ հիմա Հրեայ վաճառական մը մօտօք ըրած էր: Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Մկրտիչ Պօղոսօֆ (Այլը Էֆէնտի խան, Թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին եւ ունի ճիշտ ու այլազան միջոց մը այդ կարգի ամէն կերպ շէնքերու եւ կարող է մրցիկ ամէն կերպով: Վստահ եւ ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառի մեր բոլոր Հայ դեղագործները եւ տոկիսները պիտի փութան իրենց գնումը ընել այս Հայ եւ այս ճիւղին մէջ մէկ հատիկ առեւտրական տունէն, քան յայտնու համար Հայ ձեռնարկուն որ մինչոյն ատեն աժանութիւնը քնարան ընտրած է իրեն:

Կ Ա Ս Ն Ս Կ Ի Տ Ա Տ Ա Ս Ե Ա Բ Ո Յ Ժ

ՏՈՔԹՈՒ Մ. ԱՅՈՆՆԵԱՆ

Վկայեալ Բարիկի համալսարանէն, եւ անձնական ատանմաբոյժ երջանկայիշատակ Մուգաֆէրէտաֆի Շահին:

Բերա Մեծ Փողոց, ուսական դեպքանատան դիմաց Սիթէ տը Սիթի, ուր կը դարձանէ ամէն տեսակ ակոսայի, լինտի եւ բերի հիւանդութիւններ վերջնական ընդունուած մէթոտներով, կիզ ձեռքները սան քրօյէ է սան ըլլաք տաք տարի ապահովութեամբ:

Սոյն դարձանները կը կատարուին Գաղղիական եւ Ամերիկեան ամենալեզիւն հնարած գործիքներով, որով ենթական՝ ամէն տեսակ գործողութիւնները պիտի ընդունի, առանց ցաւի եւ առանց քնացուելու: Դարձմանատունը Բարիկեան մասնագիտական վերջին սիսդէմով, իր տեսակին մէջ եղական է: Այցելեցէ՛ք եւ դատեցէ՛ք: